



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ՔԱՐԱԳԼՈՒԽ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ.
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է համայնքի ղեկավար  Ստեփանյանը
Հաստատվել է համայնքի ավագանու  2017թ. թիվ 6-Ն որոշմամբ

2017թ., գ. Քարազուխ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք	3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն	4
2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը.....	6
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը	7
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ	8
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ	10
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն.....	11
3. Համայնքի զարգացման նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում 12	
3.1. Համայնքի զարգացման տեսլական	12
3.2. Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում.....	12
4. ՀԶԾ ֆինանսավորում	18
5. ՀԶԾ մոնիթորինգ.....	19

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Քարագլուխ համայնքը ունի 874 մշտական բնակչություն, որից շուրջ 576-ը՝ 19-62 տարեկան: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստելով համայնքի բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը:

Համայնքն ունի գազաֆիկացման կարիք, որը նույնպես օրակարգային հարց է: Համայնքի մշակույթի տունը գտնվում է անմխիթար վիճակում ինչը խոչընդոտում է միջոցառումների և հանդիպումների կազմակերպմանը: Համայնքում չկան երիտասարդական և այլ ժամանացային կենտրոններ: Խմելու ջրի ցանցը և ամբարը գտնվում է վատթար վիճակում, կապիտալ վերանորոգման կարիք ունի:

Հետևաբար ելնելով վերոնշյալ խնդիրներից համայնքում առաջիկա 5 տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝ օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և այլ միջազգային կառույցների աջակցությունը.

- Նոր աշխատեղերի ստեղծում
- Գյուղամիջյան գլխավոր ճանապարհի լրիվ ասֆալտապատում
- Փողոցների ամբողջական լուսավորություն
- Գերեզմանոցի ցանկապատում և հանդամիջյան ճանապարհների բարեկարգում
- Համայնքում աղբահանության կազմակերպում
- Խմելու ջրի ցանցի բարելավում և ամբարի կապիտալ վերանորոգում

Համայնքը համագործակցում է է „Ֆուլեր տնաշինական կետրոն” ծրագրի հետ, նախատեսվում է հնարավորինս ընդլայնել համագործակցության շրջականները և ներգրավվել նոր ծրագրեր:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Քարագլուխ գյուղը վերաբնակեցվել է 1820թ. մարտ ամսից: Գյուղն ավելի հին է, քան ենթադրվում է, որի վկայությունն են գյուղի տեղական խաչքարերն ու եկեղեցին:

Վայոց ձորի մարզի Քարագլուխ համայնքը գտնվում է Վարդենիսյան (եռնաշղթայի ստորին գոգավորության վրա: Ծովի մակարդակից 1600-3300մ բարձրության վրա: Ունի քաղցրահամ ջրերի մեծ հնարավորություն:

Հողերը քարքարոտ է, կտրտված, տարիների ընթացքում ենթարկվել է էրոզիոն պրոցեսների և դարձել գյուղատնտեսական մշակման համար ոչ պիտանի:

Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, իսկ ամռանը՝ մեղմ և բարեխառն:


Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ:

Համայնքը մարզկենտրոնից գտնվում է 22 կմ հեռավորության վրա: Համայնքի կողքով անցնում է դեպի Սևանի ավազան տանող բարեկարգ ճանապարհը:


Համայնքի առկա (ներառյալ ժամանակավոր ներկա) բնակչության թիվը 2016թ. հունվարի 1-ի տվյալներով կազմում է 874 մարդ, մշտական բնակչությունը՝ 834 մարդ, տնտեսությունների թիվը՝ 208:

Ստորև ներկայացված են բնակչության տարիքային սանդղակը և բնակչության բնական աճը 2014-2016թթ.:

Բնակչության տարիքային սանդղակ



Բնակչության բնական աճը (2014-2016թթ.)




Համայնքի վարչական տարածքը 2745,8 հա է, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1392,3հա:

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, առողջության կենտրոն, մշակույթի տուն, գրադարան:

2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Ստորև ներկայացված է համայնքի ընդհանուր և սեփական եկամուտների դինամիկան 2014-2016թթ.



2017 թվականի տարեկան բյուջեի նախագծով համայնքի ընդհանուր տարեկան եկամուտները կազմում են 19080,7 հազար դրամ, որից սեփական եկամուտներ՝ 2750 հազար դրամ:

Համայնքում այժմ գործում են 4 մանրածախ վաճառքի կետեր, ունի մեկ բուժկետ, որը գտնվում է բարեկարգ վիճակում: Բուժկետն ունի մեկ աշխատող:

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ: Ստացված հիմնական արտադրանքի փոքր մասը իրացվում է մարզում և հարակից մարերում, իսկ մեծ մասը քաղաք Երևանում:

Հողագործությունից ստացվող արդյունքը կախված է բնության քմահաճույքից: Անձրևային տարիներին որոշ չափով կարելի է բերք հավաքել, իսկ երաշտի տարիներին գյուղացին կորցնում է բերքի 80 % - ը:

Անասնապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, ձու, մեղր: Երաշտի տարիներին անասնապահության բնագավառում նույնպես մեծ դժվարություններ են առաջանում: Խոտի և խտացված կերի անբավարարվածության պատճառով դժվարանում է անասունների մսուրային շրջանի կազմակերպումը:

Համայնքի տարածքում են գտնվում 13-րդ դարում կառուցված „Թուխմանուկ” վանքը, խաչքարեր և 1876թ. կառուցված ժամտունը:

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, որտեղ հաճախում են թվով 74(2016թ. տվյալներով) աշակերտներ: Դպրոցում գործում է նախադպրոցական կրթական ծառայություն 4-5 տարեկան երեխաների համար, որոնց թիվը 2016 թ. կազմում է թվով 12:

Համայնքում նպաստառու ընտանիքների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 17: Թոշակառուների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 170, որից հաշմանդամության թոշակ 68, կենսաթոշակառու 102:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Առաջիկա հինգ տարիներին համայնքը պատրաստվում է համագործակցել ՀՀ Կառավարության, միջազգային դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների հետ: Նախատեսվում է համայնքի վարչական տարածքում շուրջ 25 տարի չգործող նախկին „Թեթև արդյունաբերության ձեռնոցների” գործարանը վերանորոգել և վերապրոֆիլավորել, որի արդյունքում կստեղծվեն նոր աշխատատեղեր ոչ միայն Քարագլուխ այլև հարևան համայանքների բնակչության համար:


Համայնքը ակտիվ համագործակցում է „Ֆուլեր տնաշինական կետրոն” ծրագրի հետ, որի արդյունքում համայնքում արդեն իրականացվել դաշտավայրերում անասունների ջրախնոցների տեղադրման ծրագիր և առաջիկայում նախատեսվում է շարունակել համագործակցությունը իրականացնելով նոր ծրագրեր:

Համայնքը պատրաստակամ է համագործակցել անհատ ներդրողների հետ, ովքեր կցանկանան որևէ ներդրում անել համայնքում:

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ


Համայնքի բյուջեի եկամուտները գոյանում են համայնքի բյուջե վճարվող հողի հարկից, գույքահարկից, տեղական տուրքերից և ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաներից: Համայնքի բյուջեի եկամուտների սեփական եկամուտները փոքր մաս են կազմում, սակայն դրանք 2013-2015թթ. փաստացի տվյալներով աճել են:

Ստորև ներկայացված է համայնքի սեփական եկամուտների փաստացի տվյալները 2013-2015թթ.:



2016 թվականի համայնքի սեփական եկամուտները նախատեսվել են 2800,0 հազար դրամ, 2017 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է 2750,0 հազար դրամ:

**Քարազուլիս համայնքի 2013-2015թթ. եկամուտների
և ծախսերի դինամիկան (հազար դրամ)**



2016 թվականին նախատեսված ընդհանուր եկամուտների չափը կազմում է 18581,4 հազար դրամ: 2017 թվականի տարեկան բյուջեի նախագծով նախատեսվել է ընդհանուր եկամուտներ՝ 19080,7 հազար դրամ:

Առաջիկա 5 տարիներին ակնկալվում է պետության կողմից տրամադրվող ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաների չափի ավելացում, ինչպես նաև նախատեսվում է ավելացնել համայնքի բյուջե մտնող սեփական եկամուտների չափաբաժինը, ի հաշիվ տեղական տուրքերի և վճարների: Առաջիկա տարիներին նախատեսված համայնքային ծրագրերի իրականացման գործում նախատեսվում է ներգրավել պետական և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

2.5 Ջարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Քարագլուխ համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստելով համայնքի բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը:

Համայնքն ունի գազաֆիկացման կարիք, որը նույնպես օրակարգային հարց է: Համայնքում չկան երիտասարդական և այլ ժամանացային կենտրոններ, համայնքի մշակույթի տունը գտնվում է անմխիթար վիճակում ինչը խոչընդոտում է միջոցառումների կազմակերպմանը մշակույթի տանը, այս ամենը նպաստում են երիտասարդների կողմից համայնքը լքելուն:

Խմելու ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է 1969թ.-ին, որի մաշվածությունն այնքան մեծ է, որ ջրի կորուստը հասնում է 35% - ի: Անձրևաջրերն ու կեղտաջրերը հաճախ ներթափանցում են խմելու ջրի ցանց, որը վտանգավոր է դարձնում ջրի օգտագործումը:

Հետևաբար ելնելով վերոնշյալ խնդիրներից համայնքի առաջիկա 5 տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

- Նոր աշխատեղերի ստեղծում
- Գյուղամիջյան գլխավոր ճանապարհի լրիվ ասֆալտապատում
- Փողոցների ամբողջական լուսավորություն
- Գերեզմանոցի ցանկապատում և հանդամիջյան ճանապարհների բարեկարգում
- Համայնքում աղբահանության կազմակերպում
- Խմելու ջրի ներքին ցանցի բարելավում և ամբարների կապիտալ վերանորոգում

Վերոնշյալ ծրագրերը նախատեսվում է իրականացնել օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և այլ միջազգային կառույցների աջակցությունը:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւՅՀՍ) վերլուծություն

<p>Ուժեղ կողմեր</p> <ol style="list-style-type: none"> 1. Առողջապահական նշանակություն ունեցող խոտաբույսերով և հատապտուղներով հարուստ բնություն 2. Բարձրագույն կրթություն ունեցող բնակիչներ 	<p>Թույլ կողմեր</p> <ol style="list-style-type: none"> 1. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների փոքր չափաքանակ 2. Զբաղվածության խնդիր 3. Սոցիալապես անապահով բնտանիքների մեծ թիվ 4. Շուկայից հեռու գտնվելը 5. Բնակեցության իրազ մասի վթարային վիճակը
<p>SWOT վերլուծություն</p>	
<p>Հնարավորություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. Աշխատուժի առկայություն 2. Համագործակցության շրջանակների ընդլայնում 3. Մեծ քանակությամբ ջրի ամբարման հնարավորություն 	<p>Վտանգներ</p> <ol style="list-style-type: none"> 1. Համայնքում բնակչության միգրացիայի աճ 2. Սոցիալ-տնտեսական բնութաների արավիճակի վատթարացում

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱԿՈՐՈՒՄ

3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի տեսլականն է ունենալ զարգացած գյուղատնտեսությամբ, փոքր բիզնեսներով համայնք, որտեղ բնակիչներ կունենան զբաղավածություն, երիտասարդները կվերադառնան և կմնան համայնքում: Դրան է ուղղված համայնքի կողմից կազմված առաջնահերթ ծրագրերի, նպատակների ձևակերպումը ըստ առաջնահերթ բնագավառների, որը ներկայացված է հաջորդ բաժնում:

3.2 Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Ստորև ներկայացվում է համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում՝ ըստ առանձին բնագավառների.

ԾՐԱԳԻՐ 1

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ:

Համայնքում կարևոր նշանակություն ունի նոր աշխատատեղերի ստեղծումը: Համայնքում 25 տարի և ավել չի աշխատում նախկին "Թեթև արդյունաբերության" ձեռնոցների, գործարանը: Բնակչության համար կենսական նշանակության հարց է գործարանի շենքի վերապրոֆիլավորումը: Շենքը գտնվում է անբարեկարգ վիճակում, անհրաժեշտ է մեծ ֆինանսական ներդրում, գործարանի վերանորոգման և վերապրոֆիլավորման համար: Գործարանի վերագործարկումը ոչ միայն Քարագլուխ համայնքի բնակիչների, այլ նաև հարևան համայնքների համար կապահովի նոր աշխատատեղեր: Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է հարցը բարձրացնել ՀՀ կառավարություն առջև ստանալու անհրաժեշտ ֆինանսական ներդրումը:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 60 մլն ՀՀ դրամ, որն ակնկալվում է ստանալ ՀՀ կառավարության պետական աջակցության ծրագրի շրջանակներում: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2018 թվականի ընթացքում:

ԾՐԱԳԻՐ 2

ԳՑՈՒՂԱՄԻՋՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ

Գյուղամիջյան ճանապարհները անբարեկարգ են: Չնայած պարբերաբար կատարվում են հողով փոսալցման աշխատանքներ, սակայն անհրաժեշտ է հնարավորություն ստեղծել ասֆալտապատելու գյուղամիջյան ճանապարհները /1կմ/: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է հարցը բարձրացնել համապատասխան գերատեսչությունների և ՀՀ կառավարության առջև:

ԾՐԱԳԻՐ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ:

Համայնքի համար կարևոր է փողոցային լուսավորությունը: 2017 թվականին նախատեսվում է իրականացնել համայնքի գլխավոր փողոցի լուսավորությունը: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 8 մլն ՀՀ դրամ, որը նախատեսվում է իրականացնել համաներդրմամբ: Համայնքի սեփական ներդրումը կկազմի 1 մլն դրամ, մնացած 7 մլնն ակնկալվում է ստանալ այլ կազմակերպություններից ու ներդրողներից:

ԾՐԱԳԻՐ 4

ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ ՑԱՆԿԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՀԱՆԴԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ:

Գերեզմանոցի ցանկապատումը անհրաժեշտություն է այն բարվոք վիճակում և անվնաս պահելու համար: Այդ իսկ պատճառով նախատեսվում է այդ ծրագիրը իրականացնել 2017թ-ին տեղական բյուջեի միջոցների հաշվին: Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է 980 հազար դրամ:

Հանդամիջյան ճանապարհների անբարեկարգ վիճակը խոչընդոտ է գյուղացիների գյուղատնտեսական աշխատանքների կատարմանը, լրացուցիչ խնդիրներ է առաջացնում տեխնիկայի և բնակիչների համար: Կարևոր է ծրագրի ամբողջական իրականացումը:

Որոշակի աշխատանքներ արդեն կատարվել են վերոնշյալ խնդրի լուծման ուղղությամբ: Նախատեսվում է 2017 թվականի տարեկան բյուջեի միջոցների հաշվին բարեկարգել ճանապարհը, որի համար անհրաժեշտ է նախնական գնահատմամբ 250 հազար դրամ:

ԾՐԱԳԻՐ 5

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Համայնքում չկա աղբահանություն: Գյուղից դուրս հանրապետական նշանակություն ունեցող ճանապարհի եզրերը դարձել է ուղղակի աղբավայր: Տեսարանը շատ տհաճ է, բացի դա այդ ամբողջ աղբը / պլաստիկ շշերը, պոլիէթիլենային տոպրակները և այլն/ իրական աղետ են ներկայացնում

շրջակա միջավայրի, հարակից պտղատու այգիների և ընտանի կենդանիների համար: Անհրաժեշտ է համայնքում տեղադրել աղբամաններ և կազմակերպել համայնքում աղբահանություն: շաբաթական 2 անգամ Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների հաշվին: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 1մլն. դրամ:

ԾՐԱԳԻՐ 6

ԽՍԵԼՈՒ ԶՐԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ ԵՎ ԱՄԲԱՐԻ ԿԱՊԻՏԱԼ

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1988թ:Զրագծի երկարությունը կազմում է 9կմ:Վերջին տարիներին տնտեսական անկման և ֆինանսական սղության պատճառով շարքից դուրս էելել մոտ 25 տարվա վաղեմություն ունեցող մաշված ջրագծերը: Պետք է հաշվի առնել նաև այն հնագամանքը, որ վերանորոգման ենթակա ջրագծերը անցնում են լեռնային տարածքով, որտեղ անծրևաջրերից ու գարնան ձնհալից առաջանում են սելավներ և մեծ վնաս հասցնում խողովակաշարին:Սելավների պատճառով խողովակները ջարդվում են ու փչանում:Համայնքի հրատապ խնդիրներից է խմելու ջրի ջրագծերի հիմնական և ներքին ցանցերի ու ամբարի վերանորոգումը: Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է հարցը բարձրացնել համապատասխան գերատեսչությունների և Հայաստանի Հանրապետության կառավարության առջև:Ծրագրի արժեքը նախնական հաշվարկներով 25մլն դրամ է: Ծրագրի իրականացման համար համայնքապետարանը կկազմակերպի անհրաժեշտ աշխատանքները:


4. ՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի զարգացման ծրագրում նախատեսված ծրագրերը և այլ աշխատանքներ ուղղված համայնքի զարգացմանը կիրականացվեն օգտագործելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Կառավարության պետական աջակցությունը, միջազգային և դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների աջակցությամբ: Նշված ներդրումները և աջակցությունը ստանալու համար այժմ տարվում են աշխատանքներ:

Մասնավորապես ՀԶԾ-ում նշված մի քանի ծրագրերը նախատեսվում է իրականացնել ՀՀ Կառավարության և անհատ ներդրողների աջակցությամբ: Ծրագրերի մի մասը կիրականացվեն համայնքի սեփական եկամուտների հաշվին:

Ստորև ներկայացվում է 2017-2021 թվականների ընթացքում վերոնշյալ ծրագրերի ր աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսավորման աղբյուրները և դրանց չափերը:

ՀԶԾ ֆինանսավորման ուղղությունները



- * ՀՀ Պետական աջակցություն
- * Համայնքի սեփական ներդրում
- * Միջազգային և դոնոր կազմակերպություններ

Վերոնշյալ ծրագրերի բյուջեները հաշվարկված են նախնական գնահատմամբ, նախատեսվում է այդ ծրագրերը իրականացնել համաներդրմամբ՝ ներգրավելով համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Պետական աջակցությունը, ինչպես նաև միջազգային և դոնոր կազմակերպությունների, անհատ ներդրողների աջակցությունը:

5. ՀԶԾ ՍՈՆԻԹՈՐԻՆԳ

Համայնքի ՀԶԾ ծրագրով ներառված զարգացման ծրագրերը և աշխատանքները կարևոր են համայնքի զարգացման գործում, որոնք միտված են գլխավորապես համայնքի բնակչության կենսամակարդակի և ապրուստի պայմանների բարելավմանը, այդ իսկ պատճառով ՀԶԾ-ի մոնիթորինգը շատ կարևոր:

Նախատեսվում է մոնիթորինգ իրականացնել 5 տարիների ընթացքում վերը նշված բոլոր ծրագրերի իրականացման ժամանակ, ինչպես նաև իրականացնել մոնիթորինգ յուրաքանչյուր ծրագրի ավարտից հետո հասկանալու ստացված օգուտները և հետագայում նմանատիպ ծրագրերի իրականացման ընթացքում կատարվելիք բարեփոխումները:

Մասնավորապես մոնիթորինգի կենթարկվեն հետևյալ ցուցանիշները.

- յուրաքանչյուր ծրագրի բյուջեն, դրա ֆինանսավորման աղբյուրները,
- ծրագրի օգուտները և արդյունքները,
- ներգրավված բնակիչների թիվը.

Կատարված մոնիթորինգի արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն համայնքի բնակչության ուշադրությանը տարին մեկ անգամ՝ հրավիրելով համայնքի ընդհանուր ժողով: Այն կօգնի ապահովել ՏԻՄ աշխատանքների թափանցիկություն, ինչպես նաև յուրօրինակ հարթակ կհանդիսանա լսելու համայնքի բնակիչների առաջարկությունները և կարծիքները:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ
«Վայոց ձորի մարզի Քարագլուխ համայնքի խմելու ջրի ներքին ցանցի բարելավում և ամբարի կապիտալ վերանորոգում»
 (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը, խթանումը						
Ծրագրի անմիջական նպատակ	Բնակիչների բավարարվածություն խմելու ջրի մատակարարումից						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Հիմն. բավ	Հիմն. բավ	Հիմն. բավ	Հիմն. բավ	բավ	բավ
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Ջրագծի կառուցում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Առկա չէ	Առկա չէ	Առկա է	Առկա է	Առկա է	Առկա է
	2. Բնակիչների բավարարվածություն խմելու ջրի մատակարարումից						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Հիմն. բավ	Հիմն. բավ	Հիմն. բավ	Հիմն. բավ	բավ	բավ
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Խմելու ջրի ցանցի կառուցման նախագծային աշխատանքներ 1.2. Խմելու ջրագծի կառուցում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ֆուկուս խմբերի շրջանում հարցումներ 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.5 մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 24.5 մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 25 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Քարագլուխ համայնքը ունի:						
Ծրագրի հիմնական շահառուները	Քարագլխի բնակավայրի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը հնարավորություն կտա ամբողջովին ապահովել Քարագլուխ համայնքը խմելու ջրով, վերացնել ամռան սեզոնին ջրի սակավությունը և բնակչության դժգոհությունը						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ
«Վայոց ձորի մարզի Քարագլուխ համայնքի գերեզմանոցի ցանկապատում և հանդամիջյան ճանապարհների վերանորոգում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի գերեզմանատան սակիտարական վիճակի պահպանություն, հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում						
Ծրագրի անմիջական նպատակ	Հանդամիջյան ճանապարհների բարեկարգման վիճակը արտահայտված տոկոսներով						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	2	2	3	4	5
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Վերանորոգված ճանապարհ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	2. Բնակիչների բավարարվածություն տրանսպորտի աշխատանքից						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. կազմակերպչական աշխատանքներ 1.2. բարեկարգում 60կմ 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.5 մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 2.5մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 3 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Քարագլուխ համայնքը ունի:						
Ծրագրի հիմնական շահառուները	Քարագլուխ համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017թ.-2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը հնարավորություն կտա ապահովել Քարագլուխ համայնքի գերեզմանոցի պահպանությունը և հանդամիջյան ճանապարհների երթևեկության անվտանգությունը						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«Վայոց ձորի մարզի Քարագլուխ համայնքում աղբահանության կազմակերպում» (Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի սանիտարական վիճակի և մաքրության պահպանում						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքի սանիտարական վիճակի բարելավումը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		Քիչ	բավարար	լավ	լավ	լավ	ավելի լավ
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	3.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	4. Բնակիչների բավարարվածությունը համայնքի մաքրությունից						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
Ոչ բավարար		Ոչ բավարար	բավարար	բավարար	բավարար	բավարար	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	1.1. աղբավայրի ստեղծում 1.2. աղբամանների տեղադրում						
Ծրագրի բյուջեն	2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ						
	2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ 2.2.						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ընթացիկ ծախսեր՝ 0,2 մլն դրամ						
	Կապիտալ ծախսեր՝ 1,8 դրամ Ընդհանուր բյուջեն՝ 2 մլն դրամ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում						
	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Քարագլուխ համայնքը ունի:						
Ծրագրի հիմնական շահառուները	Քարագլուխ համայնքի բնակիչներ						
	2017-2021թ.						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Ծրագրով նախատեսվում է աղբավայրը տարեկան 2անգամ ծածկել հողի հաստ շերտով, տեղադրել աղբամաններ ու կատարել աղբահանություն						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«Վայոց ձորի մարզի Քարագլուխ համայնքի ճանապարհի ասֆալտապատում»
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանություն և շահագործում						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների ամեն տարի ասֆալտապատած հատվածի երկարության հարաբերությունը համայնքի ենթակայության տակ գտնվող ճանապարհների երկարությանը, արտահայտված տոկոսով						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	0	0	2	2	5
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	5. Վերանորոգված ճանապարհ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	6. Բնակիչների բավարարվածություն հասարակական տրանսպորտի աշխատանքից						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախագծային աշխատանքներ 1.2. կառուցում 1կմ 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0.5 մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 29.5մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 30 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Քարագլուխ համայնքը ունի:						
Ծրագրի հիմնական շահառուները	Քարագլուխ համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019-2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրով նախատեսվում է ասֆալտապատել գյուղի կենտրոնից վերև գտնվող հիմնական ճանապարհը						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«Վայոց ձորի մարզի Զարագուլիս համայնքում նոր աշխատատեղերի ստեղծում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի և հարևան համայնքների բնակիչների համար աշխատատեղերի ստեղծումը և բարեկեցության ապահովումը, բնակչության արտագնա աշխատանքի և արտագաղթի նվազեցումը						
Ծրագրի անմիջական նպատակ	Բնակչության աշխատանքով ապահովվածությունը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		չկա	չկա	կա	չկա	կա	կա
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	7. Գործարանի վերանորոգում և վերապրոֆիլավորում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	8. Բնակիչների աշխատանքով բավարարվածությունը						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Նախագծային աշխատանքներ 1.2. վերանորոգում և վերապրոֆիլավորում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 1մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 59մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 60 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Զարագուլիս համայնքը ունի:						
Ծրագրի հիմնական շահառուները	Զարագուլիս համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2020-2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրով նախատեսվում է վերապրոֆիլավորելով համայնքում գտնվող նախկինում ձեռնոցների գործարանը, ստեղծել աշխատատեղեր և ապահովել բնակչությանը աշխատանքով						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

«Վայոց ձորի մարզի Քարագլուխ համայնքի փողոցների լուսավորություն»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքում գիշերային ժամերին շարժի համար բարենպաստ և անվտանգ պայմանների ստեղծումը						
Ծրագրի անմիջական նպատակ	Փողոցների լուսավորվածությամբ ապահովվածությունը արտահայտված տոկոսով						
	Տուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	20	40	60	80	100
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	9. Լուսավորության ապահովում						
	Տուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	10. Փողոցների լուսավորությամբ ապահովվածություն						
	Տուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. աշխատանքների կազմակերպում 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Ֆոկուս խմբերի շրջանում հարցումներ 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 0,5մլն դրամ Կապիտալ ծախսեր՝ 7,5մլն դրամ Ընդհանուր բյուջեն՝ 8մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ ռեսուրսներ, բացառությամբ ֆինանսականի, չեն պահանջվում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Քանի որ ծրագիրը համայնքային ենթակառուցվածքի զարգացման ծրագիր է, ուստի հիմնական ռիսկերը վերաբերում են հետագա պահպանման և շահագործման ծախսերին, որի հնարավորությունը Քարագլուխ համայնքը ունի:						
Ծրագրի հիմնական շահառուները	Քարագլուխ համայնքի բնակիչներ						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրով նախատեսվում է լուսավորել համայնքի փողոցները						